Հաստատված է՝

ԵՊԼՀ գիտական խորհրդի

24.05.2016թ. նիստի որոշմամբ

գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

_____ Գ. Գասպարյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1 ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետ՝ ՊԴ կազմ) որակավորման բարձրացման գործընթացի նպատակն է նպաստել ՊԴ կազմի մասնագիտական որակների շարունակական զարգացմանը՝ կրթական ծրագրերի նորացվող կառուցվածքին ու ելքային պահանջներին, ինչպես նաև կրթական տեխնոլոգիաների ու դասավանդման մեթոդների զարգացմանը համահունչ:

2 ԵՊԼՀ ՊԴ կազմի որակավորման բարձրացման գործընթացը 5 տարին մեկ շրջափուլով համարվում է պարտադիր երկարաժամկետ պայմանագրով աշխատող ԵՊԼՀ դասախոսների համար, սակայն գործընթացին կարող են մասնակցել նաև մյուս դասախոսները ամբիոնի և/կամ անհատական նախաձեռնությամբ: Այլ բուհերի դասախոսները կարող են մասնակցել գործընթացին՝ ըստ ցանկության:

3 ԵՊԼՀ ՊԴ կազմի որակավորման բարձրացման գործընթացը ֆինանսավորվում է ԵՊԼՀ-ի կենտրոնացված միջոցների հաշվին: Այլ բուհերի դասախոսների մասնակցությունը ծրագրին իրականացվում է վճարովի հիմունքով. վճարի չափը սահմանվում է ԵՊԼՀ ռեկտորի հրամանով:

4 ԵՊԼՀ ՊԴ կազմի որակավորման բարձրացման գործընթացի ժամանակացույցն ու ծրագիրը հաստատվում է ԵՊԼՀ Գիտական խորհրդի կողմից: Ծրագիրն ուժի մեջ է մտնում 2016 թ. սեպտեմբերի 1-ից:

II. ՊԴ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

5. Գործընթացի կազմակերպումը և ընդհանուր համակարգումն իրականացնում է ԵՊԼՀ Համալսարանական շարունակական կրթության կենտրոնը, իսկ գործընթացի բովանդակային հարցերով զբաղվում են ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումները:
6. Դասախոսը հնգամյա ժամկետում մասնակցում է որակավորման բարձրացման գործընթացին՝ աստիճանաբար կուտակելով ծրագրով սահմանված կրեդիտները:
7. ԵՊԼՀ ՊԴ կազմի որակավորման բարձրացման գործընթացի հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 14-ը դասախոսը հավաքում է վերապատրաստման դասընթացների մոդուլներից, 14-ը՝ գիտամանկավարժական ոլորտում ծավալած իր գործունեության արդյունքում՝ ըստ սահմանված կրեդիտատարության: Եվս 2 կրեդիտ հատկացվում է որակավորման բարձրացման գործընթացի ավարտին ներկայացված թղթապանակի համար:
8. Գործընթացին մասնակցելու հայտ ներկայացրած դասախոսը ինքնուրույն է ընտրում գործընթացի կրթաբլոկներում ընդգրկված մոդուլները: Այդուհանդերձ մասնակից դասախոսը պետք է նվազագույնը 2-ական կրեդիտ կուտակի մասնագիտական ոլորտի գործունեության բաղադրիչ մոդուլներից: Ուսումնական պլանը հաստատվում է ռեկտորի հրամանով:
9. Վերապատրաստվողը, ծանոթանալով ժամանակացույցին, ընտրում է տվյալ կիսամյակի համար առաջարկվող դասընթացը (դասընթացները) և Համալսարանական շարունակական կրթության կենտրոն է ներկայացնում մասնակցության հայտ՝ ըստ ամբիոնի կողմից սահմանված ժամանակացույցի: Նախատեսված ժամկետներում ներկայացված հայտերի գրանցումն իրականացնում է Համալսարանական շարունակական կրթության կենտրոնը:
10. Այլ բուհերում կամ կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններում (ՀՀ-ում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման կամ կատարելագործման արդյունքների ճանաչման ընթացակարգը

կարգավորվում է ԵՊԼՀ ռեկտորի հրամանով հաստատված Որակավորման բարձրացման գործընթացի հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով):

11. Հանձնաժողովը, համաձայն սահմանված ընթացակարգի, ուսումնասիրում է միջազգային կամ տեղական այլ կազմակերպություններում դասախոսի կողմից իրականացված գործունեության, մասնակցած սեմինարների, դասընթացների կամ որակավորման բարձրացման գործընթացի մասին հավաստող համապատասխան փաստաթղթերը (վկայագիր, տեղեկանք և այլն) և որոշում կայացնում դրանք ճանաչելու և համապատասխան կրեդիտ հատկացնելու վերաբերյալ:

III. ՊԴ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12. Վերապատրաստման յուրաքանչյուր դասընթացի հաջող ավարտին դասախոսը ստանում է դասընթացի ավարտական պահանջներին համապատասխան նմուշի վավերացված փաստաթուղթ (հավաստագիր, մասնակցության տեղեկանք), որը գործընթացի ավարտին Հանձնաժողովին ներկայացվելիք թղթապանակի մաս է կազմում:

13. Ավարտական թղթապանակը պետք է պարունակի գործընթացի հնգամյա պլանի պահանջներով սահմանված կրեդիտների հատկացումը վավերացնող համապատասխան փաստաթղթեր, դասախոսի կողմից կազմակերպված սեմինարների, գիտաժողովների և այլ միջոցառումների վերաբերյալ մասնակիցների արձագանքը, գործընկերային գնահատման արդյունքները և մասնակից դասախոսի ավարտական հաշվետվություն-ինքնավերլուծությունը:

14. Որակավորման բարձրացման գործընթացը հաջողությամբ ավարտած դասախոսին տրվում է սահմանված նմուշի պաշտոնական փաստաթուղթ՝ վկայագիր: